ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 23 2020 № 1

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ФОЛЬКЛОРИСТИКА
FOLKLORISTICS

ՀՏԴ՝ 39/904

ԱԶԱՏԱՆԻ ԲԱԶՄԱՆԻՍՏ ԱՊԱԿՅԱ ԿՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լարիսա Եգանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *անտիկ ժամանակաշրջան, ձիու և թռչնի պաշտամունք, արև, ջուր, երկինք, ստորերկրայք, առասպելաբանություն, հավատալիք, ծես, զոհաբերություն:*

2012թ. Ազատանի հնագիտական համալիրի հելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող մի դամբարանից հայտնաբերվեց կապույտ, անթափանց ապակուց բազմանիստ կնիք, որի վրա պատկերված են ձի և նրա առջև կանգնած արծիվ: Հոդվածում մանրամասն ներկայացված են կնիքի պատկերագրության ընդհանրությունները Հայաստանի, Անդրկովկասի, Իրանի և Փոքր Ասիայի համաժամանակյա նյութերի հետ: Բացահայտված է տարբեր ժողովուրդների հնագույն գրական հուշարձաններում փաստված, բանահյուսության և ոչ նյութական ժառանգության մեջ պահպանված արծվի և ձիու հնդեվրոպական ընդհանուր դիցաբանությունից սերված, պաշտամունքային և ծիսական բնույթը, նույնական պատկերագրությամբ կնիքների տարածվածությունը, դրանց օգտագործումը և՛ որպես պահպանակ հմայիլներ, և՛ որպես հանգուցյալների հոգիները տեղափոխողներ: Եզրակացվում է, որ թաղման ծեսում դրանց օգտագործման նպատակը հանգուցյալի հոգուն ուղեկցելը և նախնիների մոտ արագ հասցնելն էր:

Նախաբան. Ազատանի ամրոցը և բնակավայրը մ.թ.ա. 5-րդ դարում սկսում են լքվել: Ամենայն հավանականությամբ, բնակչության ստվար զանգվածը մ.թ.ա. 6-5-րդ դարերում տեղափոխվում է մոտ 2կմ հեռավորությամբ հիմնված Բենիամինի նորաստեղծ դաստակերտ: Ազատանի ամրոցը և բնակավայրը կորցնում են իրենց նշանակությունը, սակայն, ինչպես ցույց տվեցին վերին շերտերի պեղումները, կյանքը այստեղ շարունակվել է նաև անտիկ ժամանակաշրջանում: Ամրոցի և շրջակայքի վերին շերտը վերաբերում է հելլենիստական ժամանակաշրջանին: Այդ շերտի պեղումների ընթացքում համարյա մակերեսին հայտնաբերվեցին անտիկ շրջանի մի քանի դամբարաններ: Այստեղ հայտնաբերված թաղումները խիստ մակերեսային են, և ընթերցվում էին դամբարանների կողասալերը: Դրանք դիաթաղմամբ սալարկղային թաղումներ էին: Պեղված ոչ մի դամբարան ծածկասալ չուներ: Ամրոցի արևմտյան կողմում՝ տափարակի վրա, իրարից ոչ հեռու հայտնաբերվեցին սալարկղային 2 թաղումներ: Առաջինն ուներ հյուսիս-հարավ կողմնորոշում, կմախքը կծկված պառկած էր ձախ կողքին՝ դեմքով դեպի արևելք (նկ.1,2): Գլխի մոտ դրված էր մեկ պուլիկ, կրծքին՝ ոսկրից նախշազարդ իրի բեկոր (տախ.1, նկ.5): Դամբարանի կողքից՝ հյուսիսային կողասալի հիմքի մակարդակից, հայտնաբերվեց կապույտ, անթափանց ապակուց, երկայնակի միջանցիկ անցքով բազմանիստ կնիք (երկ.՝ 1,5 սմ, լայն.՝ 0,8սմ, հաստ.՝ 0,5սմ), (նկ. 3): Այն հավանաբար այդտեղ էր ընկել հուղարկավորության ժամանակ: Դամբարանը, ըստ հայտնաբերված նյութերի, թվագրվում է մ.թ.ա. 1-մ.թ. 1-ին դարերով[1]:

Ապակու մեջ տեղ-տեղ սպիտակավուն զանգված է, մակերեսի ձախ հատվածում՝ հավանաբար լարի թողած նեղ, խորակոս կորագիծ: Կնիքի աջ եզրը քիչ թերի է, ճակատային ուղղանկյուն մակերեսին՝ ձախ կողմում պատկերված է ձի, որի առջև կանգնած է թռչուն: Պատկերը սխեմատիկ է: Աջ ոտքն առաջ դրած ձիու իրանն անշարժ է, կուրծքը՝ քիչ դուրս ցցած, ուղիղ գծով դրած ոտքերը չեն դիպչում գետնին: Երկար վիզը գրեթե ուղղահայաց դիրք ունի, երկարավուն գլուխը քիչ կախ է, կարճ պոչը՝ վեր բարձրացրած: Թռչունը պատկերված է առջևից, գլուխը փոքր է, թևերը՝ կախված դիրքով: Գլխից վեր զիգզագաձև նշան է (տախ. I, նկ. 1, գունավոր):

Բրգանման բազմանիստ կնիքների այս ձևը փոքրասիական ծագում ունի[2]: Մ.թ.ա. V-IV դդ. նման կնիքներ արտադրվել են միայն Փոքր Ասիայում, հետա-

1 **Եգանյան Լ., Խաչատրյան Հ.,** Անտիկ ժամանակաշրջանի նորահայտ դամբարանների պեղումներ Շիրակում 2008-2016թթ.//«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի 2019թ., էջ 28-31:

2 **Максимова М. И**. Стеклянные многогранные печати найденные на территории Грузии. Изв. Института языка и истории материальной культуры Грузии. АН ГССР, 1941, № 10, стр. 89 (ebook).

գայում լայն տարածում ստացել Հայաստանում[3], Վրաստանում[4], Ադրբեջանում[5]: Կնիքների վաղ օրինակները փորագրված են քարի վրա, իսկ ավելի ուշ տարբերակները՝ գունավոր ապակու: Անդրկովկասում այդ կնիքները փորագրող և ընդօրինակող կենտրոնների մեծ մասը եղել է Պարսկաստանի և փոքրասիական երկրների հետ ավելի սերտ կապերի մեջ գտնված Հայաստանում[6]: Տեղական ապակյա կնիքները ձուլվել են քարե կնիքից հանված կաղապարում և չափերով ավելի երկար են[7]: Ազատանի կնիքը անփույթ արված, տեղական նմուշ է: Այն նյութով, ձևով վերաբերում է մ.թ.ա.II-մ.թ.Ի.դ. թվագրվող բազմանիստ ապակյա կնիքների խմբին[8], իսկ հորինվածքով համադրելի է Գեղադիրի (մ.թ.ա. IVվերջ)[9], Լենինականի (տախ. I, նկ. 3), Օշականի (տախ. I, նկ. 2)[10], Գորիսի (տախ. I, նկ. 4)[11] մ.թ.ա. II-մ.թ. Ի.դ. թվագրվող տարբերակներին: Նշված կնիքների հորինվածքում նաև զիգզագ կամ ալիքաձև նշան կա: Երբ ձին կանգնած է թռչնի դիմաց, նշանը թռչնի գլխավերևում է (տախտ. I, նկ. 1, 3), երբ թռչունը վազող ձիու գավակին է, նշանը ձիու գլխին է (տախ. I, նկ. 2, 4):

---

[3] **Аракелян Б. Н.** Очерки по истории искусства Древней Армении (VIв до н.э. –IIIв. н.э.), Изд- во АН Арм. ССР. Ер., 1976, стр. 33.

[4] **Максимова М. И.**, նշվ.աշխ., էջ 77; **Аракелян Б. Н.**, նշվ. աշխ., էջ 33: **Лордкипанидзе М.Н.** Геммы государственного музея Грузии, III, Тбилиси, Изд-во государственного музея Грузии,1961, стр. 72 (ebook).

[5] **Бабаев И. А.** О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре. Археологические исследования в Азербайджане. Сборник статей. Баку. Изд-во АН Азерб. ССР, 1965, стр. 12 (ebook).

[6] **Խաչատրյան Ժ.,** Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին» //ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 104:

[7] **Խաչատրյան Ժ.**, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները// Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 1, էջ 272-277:

[8] Տե՛ս **Максимова М. И.** Стеклянные многогранные печати найденные на территории Грузии. Изв. Института языка и истории материальной культуры Грузии. АН ГССР, 1941, № 10, стр. 89 (ebook); **Аракелян Б. Н.** Очерки по истории искусства Древней Армении (VIв до н.э. –IIIв. н.э.), Изд-во АН Арм. ССР. Ер., 1976, стр. 33; **Лордкипанидзе М. Н.** Геммы государственного музея Грузии,III, Тбилиси, Изд-во государственного музея Грузии,1961, стр. 72 (ebook); **Бабаев И. А.** О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре. Археологические исследования в Азербайджане. Сборник статей. Баку. Изд- во АН Азерб. ССР, 1965, стр. 128 (ebook). **Խաչատրյան Ժ.** 1965, նշվ.աշխ., էջ 274-276); **Նույնի**՝ Դիտողություններ Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին// (ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, N 7, էջ 98, 102): **Есаян С. А., Калантарян А. А.** Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг., Ер., Изд. АН Арм. ССР, 1988, с. 52, 58, 65-66, табл. XLI/6; XLII,2; XLVII/11; **Խնկիկյան Օ. Ս.**, Նորահայտ հուշարձան Գորիսում (Պատմա-բանասիրական հանդես, 1981, N 4, էջ 312-314, նկ. 3,1); **Եզանյան Լ. Գ.** Շիրակի անտիկ դամբարանադաշտերը // Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ, 1, Գյումրի-Երևան, «Գիտություն» հրատ, 2010, էջ 77, տախտ. XV/13: **Քոչարյան Գ.Գ.,** Դվինի տարածքում հայտնաբերված բազմանիստ կնիքը//Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, N 2-3, էջ 353-355:

[9] **Խաչատրյան Ժ.,** 1965, նշվ. աշխ., էջ 276:

[10] **Խաչատրյան Ժ.,** 1965, նշվ. աշխ., էջ 275, նկ. 3:

[11] **Խնկիկյան Օ.,** Նորահայտ հուշարձան Գորիսում//Պատմա-բանասիրական հանդես, 1981, №4, էջ 313, նկ. 3:

Հին Արևելքում, մ.թ.ա. III հազարամյակից սկսած, կնիքները ծիսական գործառույթ ունեին և օգտագործվում էին ծիսակարգերում[12]: Կնիքների հորինվածքը յուրօրինակ գաղափարագրի իմաստ ուներ[13], ժամանակակիցների համար դրանք խոսուն էին, իմաստը՝ հասկանալի: Անտիկ շրջանում և՛ կնիք են, և՛ զարդ, իսկ երբեմն ավելի շատ զարդ են, քան կնիք, առավելապես պահպանակ-հմայիլներ են: Նման կնիքները «*դրոշմիչ և վավերացման գործառույթ չեն կատարել*»[14]:

Փոքրասիական բազմանիստ կնիքների շարքում Ն.Նիկուլինայի գնահատմամբ՝ ապակյա տարատեսակի ստեղծման համար հիմք են ծառայել տեղական ավանդույթները[15]: Բազմանիստ կնիքների թեմատիկան, ըստ Ժ.Խաչատրյանի, «*վերցված է պարսկական կյանքից, Պարսկաստանի ու Փոքր Ասիայի կենդանական աշխարհից ...*»[16]:

Որևէ տարածաշրջանում պաշտամունքի աստիճանի է բարձրացվում տվյալ բնաշխարհի կենդանին: Մենդել-ռիսյան ժամանակաշրջանով թվագրվող վայրի ձիու ոսկորներ գտնվել են Լենինականում, իսկ Նալբանդ կայարանում, վյուրմյան նստվածքներում՝ ձիու ատամ[17]: Հայկական լեռնաշխարհում ձիաբուծությանը ծանոթացել են մ.թ.ա. IV-III հազարամյակներում[18]: Ձիու (ենթադրվում է՝ ընտելացված) ոսկորներ գտնվել են Էլարից[19], Շենգավիթից, Գառնիից[20], Կարազից, Կվացխելեբիից[21], Մեծ Սեպասարից*: Մ.թ.ա.III հազ. ձիաբուծությամբ

---

[12] **Փիլիպոսյան Ա. Ս.,** Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 86-91: **Քոչարյան Գ.** 2012, նշվ. աշխ., էջ 353:

[13] Կնիքները սերում են դրոշմ-խարաններից: Ծիսական բնույթ ուներ տոհմի անդամների մարմնի վրա տոտեմ կենդանու նմանությամբ խարան դնելը (**Մնացականյան Ա.**, Հայկական զարդարվեստ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1955, էջ 269), հեքիաթներում նվիրագործման ծեսի դժվարություններն ու արգելքները հաղթահարող հերոսների մարմնի տարբեր մասերին անջնջելի դաջվածք-դրոշմները (**Հայրապետյան Թ.**, Ծիսական մրցության մշակույթը հայկական հրաշապատում հեքիաթներում//Պատմա-բանասիրական հանդես, 2012, 1, էջ 159), իսկ հետնագույն վկայությունը թոնդրակեցիների ճակատին խարանվող աղվեսադրոշմ է (տե՛ս Գր.Մագիստրոսի Թղթերը, ի լույս ընծայեց **Կ. Կոստանյան,** Ալեքսանդրապոլ, 1910, էջ 162):

[14] **Քոչարյան Գ.** 2012, նշվ.աշխ., էջ 353:

[15] **Никулина Н. М.** К вопросу о «восточногреческом» и «греко-персидском» искусстве (по материалам глиптики VIV вв. до н. э.)// Вестник древней истории, М., Изд- во «Наука», 1969, N 3, с. 119.

[16] **Խաչատրյան Ժ.**, 1965, նշվ. աշխ., էջ 276:

[17] **Авакян Л. А.** Четвертичные ископаемые млекопитающие, Изд- во АН Арм. ССР. Ереван, 1959, стр. 53. (ebook); **Сардарян С.** Палеолит Армении, Изд- во АН Арм.ССР, Ер.,1954, стр. 37; **Եսայան Ս.Ա.,** Ձին Ուրարտուի ռազմական գործում//ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, 2, էջ 77:

[18] **Եսայան Ս. Ա.**, 1962, նշվ. աշխ., էջ 77:

[19] **Пиотровский Б. Б.,** նշվ.աշխ., էջ 6:

[20] **Есаян С. А.** Оружие и военное дело древней Армении, Изд- во АН Арм. ССР, Ер., 1966, стр. 119 (ebook).

[21] **Кузьмина Н.** 1973, № 2, նշվ. աշխ., էջ 185:

զարգացած Կովկասից[22] և Իրանից ձիեր էին արտահանվում՝ մատակարարելով ասորական զորքերին[23]: Հայաստանից ձիեր արտահանվում էին նաև Աքեմենյան տիրապետության շրջանում: Պարսից արքային տարեկան 20 հազար մտրուկ միհրական տոների համար Արմենիայի սատրապի կողմից ուղարկելու մասին վկայում է Ստրաբոնը[24]:

Հնդեվրոպացիների համար սմբակավոր կենդանիների մեջ ձին մարդուն ամենամոտն է: Ձիու ծիսական առանձնակի կարգավիճակի վկայությունը խեթական տեքստերում ձին ստրկուհի գերիներին հավասարեցնելն է[25]: Հնդեվրոպական դիցաբանության մեջ ձին կապվում է և՛ արևի, և՛ ջրի հետ: Հին հնդկական և լիտվական դիցերում ձին ստեղծվում է արևից[26]: «Ռիգվեդայում» աստվածներին նվիրված հիմների մեջ ներառված են «*աստվածացվող ձիերին*» ձոնված հիմներ[27]: «Ռիգվեդայում» աստվածային Էտաշա ձին արևի տեսքով է, արևն անվանվում է ձի[28], իսկ Ավեստայում՝ «*արագաձի*»[29]: Արևին հաճախ ձի էին անվանում գերմանները և հին հույները[30]: Սկանդինավյան հավատալիքներում արևն անձնավորվում էր ձիու կերպարում, կելտերի[31] և սլավոնների համար ձին արևի խորհրդանիշ էր[32]: Ձին տեղափոխում է արև աստծուն, իսկ երբեմն էլ՝ համադրվում արևի հետ: Ձիու ծածանվող բաշը համեմատվում էր արևի ճառագայթների հետ[33]: Ձի-արև համադրումը ամպրոպի և որոտի աստ-

---

* Թյուբինգենի համալսարանի պրոֆեսոր, հնակենդանաբան Հանս Պիտեր Ուերփմանի բանավոր փոխանցմամբ:

22 **Пиотровский Б. Б.** Развитие скотоводства в древнейшем Закавказье.//СА, XXIII, 1955, стр, 6 (ebook); **Есаян С. А.** Оружие и военное дело древней Армении, Ер., Изд.АН Арм СС, 1966, стр. 19; **Кушнарева К. Х. Чубунишвили Т. В.** Древние культуры Южного Кавказа. Ленинград, Изд. «Наука»,1970, стр. 110; **Цалкин В. И.** Древнейшие домашние животные Восточной Европы, Москва, Изд.«Наука», 1970, стр.185(ebook); **Кузьмина Е. Е.** Навершие со всадниками из Дагестана//Советская Археология, № 2, 1973, стр.185; **Кузьмина Е. Е.** 1973, № 2, стр. 185.

23 **Янковская Н.Б.** Некоторые вопросы экономики ассирийской державы//Вестник древней истории, Москва, Изд. «Наука».1956, №1, схема, 4, стр. 45;(ebook) Кузьмина. 1973, № 2, նշվ. աշխ., էջ 185:

24 **Ստրաբոն.** Քաղեց և թարգմանեց **Հր. Աճառյանը**, Եր., Յերեւանի պետական համալսարանի հրատ., 1940, էջ 61:

25 **Иванов Вяч. Вс.** Избранные труды по семантике истории культуры. Том V, Мифология и фольклор. М. Изд.«Знак». 2009. стр. 247(ebook).

26 **Müller F. M.** Contributions to the science of mytology. L.N. Y., 1897, v.1, 728 (ebook).

27 **Гамкрелидзе Т. В. Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., էջ 548:

28 **Schroder L.** Arische Religion. Lpz., 1923, Bd.2. p.17 (ebook).

29 **Müller F. M.**, . նշվ. աշխ., էջ127:

30 **Mannhardt W.** Die Iettischen Sonnemythen, ZE, 1875, Bd. 7, 93 (ebook).

31 **König M. E.** Die Symbolik der urgeschichtlichen Menschen. ,,Symbolon,, Bd. 5 Basel, 1966, 154 (ebook).

32 **Рыбаков Б. А**. Прикладное искусство и скульптура. В кн: История Древней Руси. Т. 2, Москва-Ленинград, Изд.АН СССР, 1951, стр. 204-233 (ebook).

33 **Խաչատրյան Ժ.,** Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, Պատմա-բանասիրական հանդես, 2003, № 2, էջ 172 (ebook).

ված Ինդրայի կերպարում է: Ինդրան ձիերի տիրակալ է[34], Ինդրան է արևը բարձրացնում երկինք[35]:

Ըստ հին հնդկական ավանդության՝ ձին ծնվում է օվկիանոսից և հայտնվում Ինդրային[36]: Ջրերում ծնված, ջրում ապրող և ջրից ակնթարթորեն երկինք՝ արևին հասնող հրեղեն ձիերը կապված են քտոնիկ աստվածների, մահվան, դժոխքի տիրակալի հետ: Հայոց հավատալիքներում հրեղեն ձիերը լճերի մեջ ապրող առասպելական կենդանակերպ էակներ են, որոնք հաճախ դուրս են գալիս ջրից և նույն տեսակի այլ կենդանիների հետ խաչասերվում: Դրանցից ծնվում են ճեփ-ճերմակ անբիծ մտրուկներ[37]: Հրեղեն ձիերը ջրից դուրս են գալիս՝ կայծակնային արագությամբ հերոսին տեղափոխելով մի վայրից մյուսը, հասցնելով երկինք ու արևին[38]: Հայ վիպական ավանդության մեջ հրեղեն է Քուռկիկ Ջալալին, որին «Սասնա ծռեր-»ի ծովածին Սանասարը ձեռք է բերում ծովից[39]: Հրեղեն է ս. Սարգսի ձին, որի «*...պնչներից ամպեր են ցայտում..., ոտների տրոփյունից աշխարհը թնդում, նիզակը խաղացնելուց սաստիկ բուք է բարձրանում*»[40]: Հրեղեն ձիերն ապրում են նաև երկնքում: Ժողովրդական հավատալիքներում փայլակը անձնավորող[41], «փայլակ-կայծակ»[42], Հրաչք[43], Ծովյան-Ծովինար ամպրոպային աստվածուհին խաղում և պարում է կայծակեղեն, աչքերից կրակ ցայտող հրեղեն ձիու վրա[44]:

Ըստ հայոց հավատալիքների՝ ջրից ծնված հրեղեն ձիերն ապրում են դևերի քարանձավներում[45]: Դևերը հեթանոսական պաշտամունքի դիցաբանական կերպարներն են, որոնց ծնունդն ու կյանքը կապված էին քարանձավի հետ[46]: Ջրից ծնվելն ու քարանձավում ապրելը առասպելաբանական մակարդակում անդրաշխարհի հետ կապի վկայություն են: Ջուրը և անդրաշխարհը նաև

---

[34] Ригведа, Мандалы I-IV. Издание второе, исправленное. Издание подготовила **Елизаренкова Т.Я.** М., Изд. «Наука»).1999, I, 2, 6.

[35] Ригведа, I, 7, 3

[36] **Топоров В. Н.** Индра, Мифы народов мира. М., Изд. Советская энциклопедия, т.1, 1991, стр. 534.

[37] **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Է, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1975, էջ 83:

[38] «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ IX:

[39] **Աբեղյան Մ.**, 1975, նշվ. աշխ., էջ 83: «Սասնա ծռեր» Եր., 1936, էջ 560:

[40] ԱՀ, II, Թիֆլիս, 1897, էջ 251-252: **Աբեղյան Մ.,** 1975, նշվ. աշխ., էջ 81:

[41] **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1964, էջ 31-32:

[42] **Մարտիրոսյան Հ.**, Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., «Սովետական գրող» հրատ., 1978, էջ 69 :

[43] **Աբեղյան Մ.**, 1975, նշվ. աշխ., էջ 70 :

[44] Նույն տեղում, էջ 70:

[45] **Աբեղյան Մ.**, 1975, նշվ. աշխ., էջ 83:

[46] Հայ առասպելաբանության մեջ քարանձավում են փակված Արտավազդը (**Մովսես Խորենացի**, Գ, II, ԿԱ), Երուանդը (**Եզնիկ Կողբացի**, 25), «Ագառավու քար» քարանձավում է փակված Միհրը (տե՛ս **Ղանալանյան Ա.,** Ավանդապատում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 39-40): Քարանձավի հետ կապված է նաև Տիրը (Նույն տեղում, էջ 74):

ծնունդ են տալիս ու պտղաբերում ապահովում: Չիու սմբակի տեղից ջուր խմելուց է Ծովինարը հղիանում և ծնում Սանասարին ու Բաղդասարին[47]: Մատակ ձիու սմբակի տեղում ջուր էին լցնում և խմեցնում ծննդկանին[48]: Սլավոնական ավանդույթներում զոքանչը նորափեսային դիմավորում էր ջրով լի ամանով, որը փեսան դատարկում էր ձիու բաշին[49]: Հնդիրանական պատկերացումներում մտրուկը մարմնավորում է ջրի և բուսականության աստվածությանը[50]: Չիու պաշտամունքը ջրի և պտղաբերության հետ էին կապում Միջին Ասիայի իրանական ցեղերը[51]: Խորեզմում հավատում էին, որ «ջրային ձին» ապրում էր լճում և ժամանակ առ ժամանակ դուրս է գալիս ցամաք[52]: Սասանյան Հազկերտ I արքայի մահվան պատճառը լճից դուրս եկած և լիճ վերադարձած հրաշալի ձին էր[53]:

Չին հանդերձյալ աշխարհի տիրակալ Յամայի նվերն էր և նախատեսված էր երկինք ուղարկելու համար[54]: Չին նաև հունական Հադեսի և դժոխքի բաբելոնյան աստվածուհու՝ Էրեշկիգալի ուղեկիցներից է[55]: Կարմիրը նույնացվում է արևմուտքի, անդրաշխարհի և դժոխքի աստծու կամ տիրակալի հետ[56]: Յաման պատկերվում էր կարմիր հագուստով[57]: Անդրաշխարհի հետ ձիու ունեցած կապի մասին սլավոնների պատկերացումներից է բխում երազին կարմիր ձի տեսնելը՝ որպես մոտալուտ մահվան նշան ընկալելը[58]: Կարմիրը նաև ծագող արևի գույնն է, ու դժվար է տարբերակել՝ կախարդական ձիերը խորհրդանշել են գեհենի կրակը, թե արևին հասնելով են դառնում հրեղեն[59]: Կարմիրը կապվում է և՛ կյանքի, և՛ մահվան հետ՝ զուգադրվելով ծագող ու մայր մտնող արևին, խորհրդանշում է մահ և վերածնունդ: Անիում՝ «փոքրիկ իշխանուհու» դամբարա-

---

[47] Ժողովրդական բանահյուսություն, Ա, Ժողովրդական վեպ, ընդհանուր խմբագրությամբ պրոֆ. Մ.Աբեղյանի, Ա հատոր, «Սասնա ծռեր», խմբագրեց պրոֆ. **Մ.Աբեղյան**, աշխատակցությամբ Գ.Ոհանջանյանի, Յերեւան, «Պետական հրատարակչություն», 1936, պատում ԻԴ, էջ 1029, էջ 3, էջ 1031-1032, 6:

[48] ԱՀ, Գիրք, XXVI, Թիֆլիս, 1916, էջ 178:

[49] **Потебня А.А.** Собрание трудов. Символ и миф в народной культуре. Составление, подготовка текста, статья, комментарии А.Л.Топоркова, М., Изд. «Лабиринт», 2000, стр. 146 (ebook).

[50] **Жирмунский В. М., Зарифов Х. Т.** Узбекский народный героический эпос. М., Изд. Гослитиздат, 1947, стр. 169.

[51] **Кузьмина Е. Е.** Распространение коневодства и культа коня у иранских племен Средней Азии и других народов Старого Света. В кн: Средняя Азия в древности и средневековье; история и культура (под редакцией Б. Гафурова и Б. Литвинского), Изд. «Наука», М., 1977, стр. 42 (ebook).

[52] **Беленицкий А. М.** Хуттальская лошадь в легенде и историческом предании//Советская этнография, Изд. АН СССР. 1948. № 4. стр. 164 (ebook).

[53] Նույնը:

[54] **Голан А.**, նշվ. աշխ., էջ 49:

[55] **Клингер Х.,** նշվ. աշխ., էջ 109:

[56] **Голан А.**, նշվ. աշխ., էջ 44:

[57] **Гринцер П. А.** Яма. МНМ, т.2. М., Изд.«Советская энциклопедия»,1992, стр. 683.

[58] **Клингер Х.** Животные в античном и современном суеверии. Киев, 1911, стр. 107, 116, 172 (ebook).

[59] **Голан А.**, նշվ. աշխ., էջ 49-50:

նում, աճյունը դրված է եղել ասեղնագործ մետաքսյա կարմիր կտորի վրա[60]: Դամբարանում կարմիր կտորը, երազին կարմիր ձի տեսնելը՝ նույն խորհուրդն ունեն: Ջուրը, երկինքը (արշալույսը) և ձին կապված են[61]:

Ձին ոչ միայն կապվում է արևի, այլ նաև ստորերկրայքի հետ, իսկ արևն ու ստորերկրայքը միասնական աշխարհի երկու հակադիր կողմերն են: Այդ կապը կյանքի և մահվան, առավոտի և երեկոյի, սպիտակի և սևի հակադրության մարմնավորում է միաժամանակ հանգուցյալների և պտղաբերության հետ կապված երկվորյակների պաշտամունքում: Երկվորյակների սանսկրիտական անունը՝ Աշվին (Aśvinau), նշանակում է «ձի ունեցող կամ ձիուց սերված»[62]: Հնդկական դիցաբանության մեջ երկվորյակ Աշվինները՝ Ագնին (կրակ, կայծակ) և Ինդրան (լուսավոր երկինք), ծնվում են Վիվասվաթա ձիուց և Սարանից[63]: Նրանք ծնվել են երկնքից[64], կապվում են արևային աստվածությունների հետ, համեմատվում թռչունների հետ, սլանում ձիերով և թռչուններով լծված ոսկյա կառքով[65]: Հետվեդայական դարաշրջանում Աշվիններն անվանվում են Աշվինիկումար, այսինքն՝ ձիու զավակներ[66]: Աշվինները մեռածներին կյանք են վերադարձնում[67]: Նրանցից մեկը գիշերվա զավակն է, մյուսը՝ արշալույսի[68]: Հունական սպիտակ ձիեր ունեցող Դիոսկուրները մեկ օր անցկացնում են ստորերկրայքում, մեկ օր՝ Օլիմպոսում (երբ նրանցից մեկը գտնվում էր Օլիմպոսում, մյուսն իջնում էր Հադես)[69]:

Ջրի, քարանձավի և արևի հետ կապով ձին միավորում է ստորերկրայքը, երկիրն ու երկինքը՝ ներկայացնելով տիեզերքի միասնական կենդանակերպ կերպարը: Ձին աստվածության կենդանակերպ մարմնավորում է: Աստվածների մարդակերպ դառնալու հետ ձին դառնում է հնդիրանական պանթեոնի տարբեր աստվածների ինկորնացիա: Ձիու պատկերին զոհեր են մատուցում, նրա պատվին ճրագ վառում, կերակրում հատուկ ուտելիքով[70], զոհեր մատու-

---

[60] **Орбели И. А.** Избранные труды. Ер., Изд. АН Арм ССР, 1963, стр. 44-46.

[61] **Марр Н. Я.** Приволжские и соседящие с ними народности в яфетическом освещении их племенных названий. Избранные работы, т. V, М.-Л., изд. ГСЭИ, 1935. стр. 239 (ebook).

[62] **Кузьмина Е. Е.** 1973, նշվ.աշխ., էջ 188; **Топоров В.Н.** Ашвины. Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), т.1, М. Изд. Советская энциклопедия, стр. 144; **Штернберг Л.Я.**, նշվ. աշխ., էջ 142:

[63] **Штернберг Л. Я**. Античный культь близнецовь при свете этнографіи, Съ приложениіемъ заметки; «Культовые домики близнецовъ у гильяковъ». Сборникъ Музея Антропологии и этнографии имени Петра Великого приимператорской академіи. Наукъ Томъ III, Петроградъ, 1916. стр. 142 (ebook).

[64] Նույն տեղում, էջ 134:

[65] **Топоров В. Н.** Ашвины. МНМ, т.1, М., Изд. «Советская энциклопедия», 1991, стр. 144.

[66] Նույնը:

[67] Ригведа, I, 117, 7,24; X,65, 12; **Штернберг Л.Я.**, նշվ. աշխ., էջ 140; **Топоров В.Н.** Ашвины. նշվ. աշխ., էջ 144:

[68] Ригведа, I, 181,4.

[69] **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 83:

[70] **Борозова Н. Г.** Некоторые материалы об амулетах-украшениях населения Средней Азии в кн: Домусульманские верования и обряды в Средней Азии. М., Изд. «Наука», 1978, стр. 40 (ebook).

ցում[71]: Ձիու են փոխակերպվում Դեմետրան և Պոսեյդոնը: Արքայիկ Արկադիայում երկվորյակ Դիոսկուրների տիրակալ կամ մայր Սև Դեմետրային պատկերում էին ձիու գլխով և բաշով[72]: Հունաստանում ձիերը սերված էին անմահներից[73]: Ձիու փոխակերպված Դեմետրայի և Պոսեյդոնի ամուսնությունից ծնում է Արեոն ձին: Գորգոն Մեդուզան Պոսեյդոնից ծնում է Խրիսաորին (ոսկյա սուր, կայծակ) և թևավոր ձի Պեգասին, որը, ըստ Հեսիոդոսի, Զևսին կայծակ էր մատուցում[74]:

Հնդեվրոպական ավանդույթներում ձին միջնորդ է երկու աշխարհների միջև և համարժեք է Կենաց ծառին[75]:

Ձիու զոհաբերություն: Պաշտամունքի բարձրակետը զոհաբերությունն է: «Ռիգվեդայում» ձին ծիսական կենդանիներից մեկն է, և հատուկ հիմներ են նվիրված զոհաբերությանը[76]: Զոհաբերվող կենդանու հետ նշվում են նաև վեդայական պանթեոնի աստվածների անունները՝ Միթրա, Վարունա, Ինդրա: Ձիու զոհաբերությունը հզորության և իշխանության հաստատման գրավական էր: Ինդրան, վախենալով Սագարի որդիներից, որ հզորությամբ կգերազանցեն իրեն և կզրկեն իշխանությունից, հափշտակում է նրանց զոհաբերության ձին[77]: Ամու-Դարիայի մեջ ձիեր էին նետում[78](զոհաբերում): Աստվածության մարմնավորում ձին զոհաբերում էին արևին (արևի աստծուն)[79]: Քսենոֆոնի վկայությամբ՝ արևին ձիեր էին զոհաբերում նաև Հայաստանում[80]:

Անիվի հայտնագործմամբ ձի-արև համադրումը փոխանցվում է նաև անիվին և ձիերով լծված փոխադրամիջոցին: Արևը պատկերվում է ձիու, մարտակառքի կամ անիվի ձևով: Դիցաբանական կերպարները փոխադրվում են ձիեր լծված երկանիվով կամ մարտակառքով: «Ռիգվեդայում» աստվածային Էտաշա ձին

---

[71] **Кузьмина Е. Е.** Скифское искусство как отражение мировоззрения одной из групп индоиранцев // Скифо-сибирский звериный стиль в искусстве народов Евразии. М., Изд. «Наука»,1976, стр. 55 (ebook).

[72] Նույնը:

[73] **Հոմերոս**, Իլիական, էջ 426:

[74] **Потебня А. А.**, նշվ.աշխ., էջ 243:

[75] **Иванов Вяч. Вс**. Опыт истолкования древнеиндейских ритуальных и мифологических терминов, образованных от «asva-конь». В сб.: «Предметы истории языков и культуры народов Индии». М., Изд. «Наука», 1974, стр. 94-95 (ebook).

[76] Ригведа, IV, 38-40; VII 44; X 178.

[77] **Топоров В. Н.,** Индра, նշվ. աշխ., էջ 534 :

[78] **Беленицкий А. М.**,նշվ. աշխ., էջ 164:

[79] **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 548: **Фрай Р.** Наследие Ирана. Изд. Главная редакция восточной литературы, М. Изд. «Наука», 1982, стр. 273 (ebook); **Аюбов А. Р.**. Элементы культа животных у народов Устрашаны в древности. РАН, Лавровский сборник. Материалы XXXVI я XXXVII среднеазиатско-кавказских чтений 2012-2013гг. Этнология, история, археология, культорология, СПб, 2013, стр. 20 (ebook); **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը **Ս. Կրկաշարյանի**, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, Գ I, 216:

[80] **Քսենոֆոն** Անաբասիս. Թարգմ՝. **Ս. Կրկյաշարյանի**, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, Գ IV, 35 (ebook).

տանում է Արևի կառքը[81]: Խեթական ծիսակարգում ձիեր լծված երկանիվ մարտասայլերն աշխարհի չորս կողմերը արևի պտույտի միջոց էին[82]: Մահվան ու քնի աստվածուհի Գիշեր-Նյուկտեն երկնքով սահում էր սևաթույր ձիեր լծած երկանիվով[83]: Ձիերով լծված փոխադրամիջոցը դառնում է զոհաբերության առարկա: Արևի տաճարին մարտակառքեր նվիրաբերելու ավանդույթ կար Փոքր Ասիայում[84]: Հ. Իսրայելյանը ենթադրում է, որ ձիերով մարտակառքեր էին նվիրում Արմավիրի տաճարին[85]: Վաղարշակ թագավորը «*...Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին*»,-վկայում է Խորենացին[86] (արձան՝ այսինքն կոթող, զոհասյուն): Ըստ ընդունված ծիսակարգի՝ կանգնեցված արձաններին[87] նվիրաբերումներ և զոհեր էին մատուցվելու, արեգակի արձանին՝ ձիեր կամ մարտակառքին լծված ձիեր: Ծովերի տիրակալ Պոսեյդոնին կառքին լծված ձիեր էին զոհաբերում[88]: Ձի-արև, ձի-ջուր պաշտամունքային կապի մեջ ներառվում է նոր տարր: Ձի-արև-անիվ համադրումը հնդկական «աշվամեդհա» (սպիտակ ձիու սպանություն) ծեսում է: Թագավորի կառքին աջ կողմում լծված լավագույն սպիտակ ձիուն կապում էին արևի խորհրդանիշ անիվով պսակված, արևի հենարան կենաց ծառի խորհրդանիշ սյանը և սպանում՝ առանձնացնելով գլուխն ու ոտքերը: Սպիտակ ձիու սպանությունը պատշաճում էր միայն գերագույն սյուզերենին (ավատիշխանին)[89]: Զոհաբերության ծեսը կատարում էր թագավորը, կամ նրա ներկայությամբ՝ կառավարիչը[90]: Ծեսին մասնակցող թագավորի երեք տարբեր կաստաների կանանցից առաջինը դյութանքի խոսքերով զարդարում էր ձիու գլուխը,

---

[81] **Гамкрелидзе Т. В., Иванов В. В**., նշվ. աշխ., էջ 549:

[82] **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.** Индоевропейский язык и индоевропейцы. т. I. Тбилиси, Изд. Тбилисского университета, 1984, стр. 725.

[83] **Կուն Ն.**, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., «Հայպետհրատ», 1956, էջ 87:

[84] **Իսրայելյան Հ.**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշբրոնզիդարյան Հայաստանում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 66:

[85] Նույնը:

[86] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն,աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ստ.Մալխասյանի**, Եր., «Հայաստան» հրատ., 1990, Գիրք Բ, ը:

[87] Արձան նշանակում է քար: Ըստ Բ.Առաքելյանի՝ արձան է կոչվել նաև «քարե սյունը», որ կանգնեցվել է որպես հաղթանակի նշան (տե՛ս **Բ. Առաքելյան**, Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1949, էջ 35): Բուզանդի վկայությամբ՝ Ներսես կաթողիկոսի մահից հետո շատերը «...դարձան նախկին կռապաշտության, շատ արձաններ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին» (**Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս **Ստ.Մալխասյանցի**, «Հայաստան» հրատ. Եր., 1968, Գլուխ ԼԱ):

[88] **Лосев А. Ф.** Посейдон, Мифы народов мира, т. 2, М., Изд. Советская Энциклопедия, 1992, стр. 323-324; Դիցաբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1985, էջ 206-207:

[89] **Кузьмина Е. Е**. 1976, СА, № 3, նշվ. աշխ., էջ 74:

[90] **Темкин Э. Н., Эрман В. Г**. Мифы древней Индии. М., Изд «Наука». 2-е издание, 1982. стр. 155-157, 261**; Кузьмина Е. Е.** 1976, № 3, նշվ. աշխ., էջ 72:

քանի որ մարմնից անջատված գլուխը պիտի թագավորին հոգեկան էներգիա տար, երկրորդը՝ ձիու մարմինը, որպեսզի փոխանցեր ֆիզիկական ուժը, իսկ երրորդը՝ հարստություն և պտղաբերություն ապահովող ձիու գավակը[91]: Ծեսն ավարտվում էր համընդհանուր խրախճանքով, որի համար սպանում էին հարյուրավոր ձիեր և ցուլեր: Նույն ակունքից է սերում սպանված ձիու հետ թագավորի ծիսական ամուսնության իռլանդական ծեսը[92]: Հնդկականին զուգադիր է սկյութական ծեսը, երբ ձիեր էին զոհաբերում բոլոր յոթ աստվածներին, նաև հիսուն լավագույն ձիեր խեղդամահ անում թագավորի թաղման ծեսին[93]: Հնդկական «աշվամեդհա» ծեսի համար ընտրում էին միայն հասուն տարիքի մտրուկներ[94]: Սկյութական ծեսում միայն հասունության հասած ձիեր[95] զոհաբերելը փաստված է սկյութական թագավորական կուրգանների պեղումներով[96]: Երկու ծեսերի նպատակը նույնն է. սպանված ձիու ֆիզիկական, սեքսուալ, մոգական ու գերբնական ուժերը փոխանցել թագավորին՝ նրան դարձնելով անմահ[97]: Հնդեվրոպական այլ ժողովուրդներ նման ծես կատարում էին թագադրման ժամանակ. կելտերի մոտ՝ Հիպպմիդուա, հռոմեացիների՝ Էկվուս Օկտոբեր[98]: Բերվածներին համադրելի է ի պատիվ պատերազմից թագավորի հաղթական վերադարձի սպիտակ ձիեր զոհաբերելու մասին Ագաթանգեղոսի վկայությունը. Հայոց Խոսրով թագավորը «... *զօրսն Պարսից...ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ...*» վերադառնալով, հրաման է տալիս «*...յեօթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել...սպիտակ ձիովք և սպիտակ ջորւովք ...զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր*»[99]:

Ձիու զոհաբերությունն ուղեկցում էր թաղման ծեսին, բնորոշ է հին հույներին, հնդիկներին, իրանցիներին և հնդեվրոպական այլ ժողովուրդների: Ձի զոհաբերում էին նաև պատերազմում ընկած հերոսների թաղման ծեսի ժամանակ[100]: Զոհաբերությունները ձոն էին աստվածներին և հանգուցյալի հոգուն[101]:

---

[91] **Кузьмина Е. Е**. 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

[92] **Schroder F.** Ein aitirischer Kronungstritus und das indigermanische Rossopfer (Zeitschrift fur Celtisch Philologie) 1927, p. 310-312. (ebook)

[93] **Հերոդոտոս,** IV, 72:

[94] **Кузьмина Е. Е.** 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

[95] **Հերոդոտոս**, IV, 60-62:

[96] **Кузьмина Е. Е.** 1976, СА, № 3, նշվ.աշխ., էջ 73:

[97] Նույն տեղում, էջ 73-74:

[98] **Dumont P.,** նշվ. աշխ., էջ 93:

[99] **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Ա. Տեր-Ղևոնդյանի**), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1983, 22:

[100] Աքիլլեսը «Փայտակույտի վրա նետեց հսկա ուժով հանկարծակի//Ահիպարամբ չորս նժույգներ, հառաչելով հոգու խորքից». **Հոմերոս**, Իլիական, նշվ.աշխ., էջ 423:

«Մահաբհարաթում» նշվում է, որ նվիրաբերում էին արագընթաց, արշալույսի գույնի վայրի ձիեր[102]: Ծեսը հաստատում են հնագիտական փաստումներ: Այն դեպքերում, երբ հնարավոր է եղել պարզել թաղման ծեսում զոհաբերված ձիերի տեսակը, դրանք եղել են հրաշեկ[103](հմմտ. հանդերձյալ աշխարհի տիրակալ Յամայի կարմիր հագուստ կրելու և կարմիրը մահվան խորհրդանիշ լինելու հետ): Կելտերը հավատում էին, որ հանգուցյալների հոգիներն այն աշխարհ է տեղափոխում ձին[104]: Ծիսական նույն իմաստն ուներ օսերի և Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդների կողմից կատարվող «*հանգուցյալին ձիու նվիրաբերում*» ծեսը[105]: Ձիու պաշտամունքի և թաղման ծեսում նրա ունեցած դերի վկայություն են անարյուն զոհաբերության համար նախատեսված ձիագլուխ եղջրազավաթները[106] և ձիակերպ անոթը[107]: Հանդերձյալ աշխարհի հետ ձիու կապի ու հանգուցյալին արագ տեղ հասցնելու հավատալիքի վկայություն է Շիրակում հանգուցյալի դին տանող ֆուրգոնին լծված ձիու ականջին «շուտ-շուտ գնա, մեռել է» բղավելը[108]:

Հնդեվրոպական թաղման ծեսում կատարվում էին ձիերով մրցումներ[109]: Աշվինները և Դիոսկուրոսները նաև ձիերի մրցումների հովանավորներ են[110]: Հույները Դիոսկուրոսներին պաշտում էին որպես հեծյալների կամ ձիուկների[111] և համոզված էին, որ նրանք կարող էին հայտնվել սև ձիու վրա՝ հեծյալների տեսքով[112]: Ի պատիվ Մարսի ծննդի՝ կազմակերպվում էին ձիերի վազք, ինչպես նաև հանգուցյալների պաշտամունքին նվիրված ձիերով մրցումներ: Հռոմեական ձիերի վազքը (equiria) կատարվում էր փետրվարի 27-ին, իսկ երկրորդը՝ մարտի 14-ին՝ կատարում էին ի պատիվ նոր ծնվող Մարս-Արևի[113]: Ծեսի կատարման ժամանակն արդեն իսկ ցույց է տալիս, որ նպատակը ձիերի արագ

---

[101] **Герни Оливер Р**. Хетты. Перевод с англ. Н.Лозинской и Н. Толстого. М. Изд. «Наука». 1987. стр. 147 (ebook).

[102] **Беленицкий А. М,** նշվ. աշխ., էջ 163:

[103] **Кузьмина Е. Е.,** նշվ. աշխ., էջ 74;

[104] **Malten L.** Das Pferd im Totenglauben.-Jahrbuch des Deutschen Archeologisschen Instituts. 1914. p. 196-214 (ebook).

[105] Ригведа, Мандалы IX-X. X, 56 .

[106] Armenie, Trezors d l`Armenie ancienne, Paris, 1996, p. 205, fig. 186:

[107] Dans les montagnes d' Arménie, 500 000 ans d´ histoire avant notre ere. Rouen, France.2007.p.202, fig. 23

[108] **Եգանյան Լ.Գ,** Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 2010, Շիրակ, Բաշգյուղ:

[109] **Топоров В. Н.** Конные состязания на похоронах. Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. Москва, Изд- во «Наука», 1990, стр. 12-37; ebook» **Миллер В.Ф.,** նշվ. աշխ., էջ 16:

[110] **Штернберг Л. Я.**, նշվ. աշխ., էջ 142:

[111] **Клейн Л. С.** Древние миграции и происхождение индоевропейских народов. СПб, Изд- во «Санкт-Петербург», 2007, стр. 77 (ebook).

[112] Նույն տեղում, էջ 140:

[113] **Топоров В. Н.** 1990, նշվ. աշխ., 12-37; Русская масляница и Западно-европейскій карнаваль. Вс. Миллера. Москва Въ Унижерситетской типографій, 1884. стр.16 (ebook).

վազքն արևին փոխանցելն է, գարնան գալուստն արագացնելը, միաժամանակ արևի անխափան շրջապտույտը ապահովելը: Ծեսը կատարվում էր Հունաստանում[114], Հռոմում[115]: Հավանաբար նույն նպատակն ունեին թաղման ծեսում տեղ գտած ձիերին նվիրված ձոներն ու ձիերով մրցումները: Մեր ենթադրությունը հաստատում են վեդայական հիմները: Վեդայական թաղման հիմներից մեկում ձիարշավում հաղթած ձիուն նվիրված ձոնին հաջորդում է երկնային ձիերին ուղղված ձոնը[116]: Թաղման ժամանակ ձիարշավներ էին կազմակերպում Աբխազիայում: Հանգուցյալի ձիու առջև աքաղաղ էին զոհաբերում և կաշին կախում ծառից[117]: Ջավախքում գերեզմանոցի մոտ գտնվող «*Գերեզմանի դուզ*» կոչվող տարածքում անցկացվում էին ձիերով մրցումներ[118]: Թաղման ծեսում ձիու ծիսական դերով է պայմանավորված Աղձնիքում անդրանիկ որդու հուղարկավորության ժամանակ զարդարված ձիու վրա մահացածի հագուստը, զենքերը տանելը[119]: Ծեսի մեկ այլ տարբերակ կատարվում էր երիտասարդի մահվան դեպքում: Վայոց ձորում երիտասարդ ննջեցյալի ձին հակառակ կողմից թամբած, հանգուցյալի հագուստներով և զենքերով տանում էին գերեզմանոց[120]: Ձին հակառակ կողմից թամբելը ոչ միայն անժամանակ մահն էր շեշտում, այլ նաև հոգին անդրաշխարհ ուղեկցող ձիուն աղերս էր՝ հանգուցյալին կյանք վերադարձնելու: Քանի որ ձին կապվում էր անդրաշխարհի տիրակալի հետ, նրան վերագրվում էր նաև կանխագուշակելու ունակություն[121]: Ղարաբաղում, եթե տան անդամի մահվանից հետո տնեցիներից մեկը հիվանդանում էր, հավատում էին, որ հանգուցյալը դեռ ողջ է և կարոտում է: Նման դեպքերում գարի էին լցնում գերեզմանին ու ձիուն մոտեցնում: Եթե ձին սկսում էր հանգիստ ուտել, նշանակում էր, որ հանգուցյալն իրոք մեռած է[122]: Գարին (հատիկը, հացը) հոգեհացի պարտադիր տարրերից է, գարի ուտելն ընկալվել է որպես ձիու մասնակցություն թաղման ծեսին և հանգուցյալին նախնիների մոտ ուղեկցելու, նաև հանգուցյալից ողջերին սպասվող վտանգը կանխող գործողություն: Ձիերը կապվում են վերածնության հետ, այդ թվում նաև՝ մարդու:

---

[114] **Հոմերոս,** Իլիական, Գրաբարից թարգմանեց **Մ. Խերանյան**, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1987, Երգ քսաներեքերորդ, էջ 423, 426:

[115] **Миллер В. Ф.**, նշվ.աշխ., էջ 16:

[116] Նույն տեղում, էջ 549:

[117] **Кузьмина Е. Е.** 1977, նշվ. աշխ., էջ 43:

[118] **Петросян Э**. Боги и ритуалы древней Армении. Ер., Изд. «Зангак-97», 2004, стр. 53.

[119] **Լալայան Ե.**, Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում//«Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտ, Եր., 1928, № 9, էջ 116 (ebook):

[120] **Սրվանձտյանց Գ.**, Մանանա, Կ.Պոլիս, Թիւ 13, 1876, էջ 114 (ebook):

[121] **Клингер Х.**, նշվ. աշխ., էջ 111**:**

[122] **Լիսիցյան Ստ.**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ)//Հայ ազգագրություն և բանահյուսություն, 12, Երևան, «Գիտություն» հրատ., 1981, էջ 52:

Խեթերը ձիու գլուխը թագավորի հետ դնում էին դամբարանում[123], որը բխում է գլխի ծիսական առանձնակի կարևոր դերից[124], նաև մասի՝ ամբողջին փոխարինելուց: Հավանաբար հանգուցյալին անդրաշխարհ ուղեկցող ձիու գործառույթը փոխանցվել է Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Հունաստանի ձիակերպ[125] և Լիտվայի ձիագլուխ տապաններին[126]: Ծեսի արձագանքները պահպանված են ազգագրական նյութերում: Երաշտի ժամանակ սատկած ձիու ոլոքը (սրունքոսկր) թաղում էին երեք ճանապարհների վրա[127], կառույցը կանգուն մնալու համար ձի էին զոհաբերում և գլուխը թաղում հիմքի տակ[128]: Երեք ճանապարհները Կենաց ծառի հորիզոնական պատկերն է, ձիու սրունքոսկրը՝ որպես մաս, փոխարինում է ամբողջին: Ծիսական նույն գործառույթն ունի նաև ձիու մազը: Ինդրան փոխակերպվում է ձիու մազի[129]: Ձիուն կանչելու համար պետք էր մազ վառել[130]: Հեքիաթներում հրեղեն ձիերի պոչից երեք մազ դնելով ծոցը[131]՝ հերոսը հաղթահարում է փորձությունները[132]: Ս. Սարգսի պասին՝ եկեղեցուց վերադառնալիս, Ճանապարհին ժամավորներն ազատ էին արձակում իրենց մազերն ու քամուն տալիս, որպեսզի սուրբը դրանց հետ տաներ իրենց ցավերն ու հիվանդությունները[133]: Մարդկանց արձակ մազերը համադրվել են երկինք թռչող ձիու բաշի հետ:

Թռչունը. Կնիքի մակերեսի աջ կողմում պատկերված է թռչուն: Արծիվն առանձին կամ այլ կենդանիների հետ պատկերելը տարածված թեմա է վաղ շրջանի

---

[123] **Кузьмина Е. Е.** 1977, նշվ. աշխ., էջ 28:

[124] Հայաստանում հանգուցյալի հետ թաղված ձիու գլուխ բացվել է մ.թ.ա 8-7-րդ դդ. Տիրաշենում (**Հարությունյան Ս.**,1990, 38), Ոսկեհասկի թիվ 2 դամբարանում՝ զարդարված բրոնզյա զարդերով և լծասարքի մասերով (**Петросян Л. А.** Раскопки памятников Кети и Воскеаска. Ер. Изд. АН Арм. ССР, 1989, 69-70), Վարդբաղի թիվ 44 դամբարանում (**Տեր-Մարգարյան Ստ.** Կումայրու «Վարդբաղ» տարածքի անտիկ դամբարանադաշտերի պեղումները // ՀՀ ԳԱԱ ՀԱԻ 1989-90թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր.,1991, 94): Ազատանի մ.թ.ա. 8-7-րդ դդ. թվագրվող դամբարանադաշտի թիվ 4, Շիրակավանի մ.թ.ա. VIII դ., Գյումրու Շիրակացի փողոցի հողային աշխատանքների հետևանքով բացված մ.թ.ա. VIII դ. դամբարաններում (փրկարարական պեղումները Լ.Եգանյան, Հ. Խաչատրյան, Նյութերը հրատարակված չեն):

[125] **Голан А.,** նշվ. աշխ., էջ 50:

[126] **Gimbutas M.** Ancient symbolism in Lithuanian folk art. (Memoirs of the American Folklore Society, v. 49), Philadelphia,1958. (ebook).

[127] Ազգագրական հանդես, Գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 201-202:

[128] **Голан А.** Миф и символ. М., Изд. «Русслит», 1993, стр. 49.

[129] Ригведа, I, 32,12.

[130] **Пропп В.** Исторические корни волшебной сказки. Л., Изд. «Лабиринт, 2000, стр.166.

[131] Կարմիր եզն ու Հուշապ, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XII, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1984, էջ 533 (ebook).

[132] Քյալ Օզլան, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IV, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1963, էջ 309:

[133] Ազգագրական հանդես, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 251-252:

կնիքների պատկերազարդման մեջ[134]: Կնիքների վրա արծիվը կանգնած է եղջերուի[135] կամ այծեղջյուրի գավակին[136]: Թռչունները պաշտամունքի առարկա են հնուց ի վեր, համարվել են աստվածային էակներ: Երկինքն ու երկիրը կապող առասպելական թռչունը կարող էր ներկայացվել տարբեր թռչնատեսակներով*: Դիցաբանության մեջ երկնքի և երկրի տիրակալի է վերաճել արծիվը՝ թռչուններից ամենահզորը: Հնդեվրոպական բոլոր ժողովուրդների կրոնում կենաց ծառի վրա նստած թռչունների մասին պատկերացում կար[137]: Խեթական ավանդույթներում, ամենավաղ տեքստերից սկսած, արծիվը՝ որպես ծիսական գլխավոր թռչուն, նշանակությամբ համադրվում է առյուծի հետ: Հին խեթական ծիսակարգում նշվում է, ինչպես «*թագավորին արծվի աչքեր արեցին...*»[138]: Արծիվը երկու աշխարհները կապող է (երկինք և անդրաշխարհ) և աղերսվում է ջրի (ծովի) հետ, հաճախ ծառայում է աստվածներին, թռչում է ծով և այնտեղից լուրեր բերում[139]:

Հնդկական և իրանական առասպելաբանություններում արական հատկանիշ կրող աստվածությունը երբեմն արծվի կերպարանքով է[140]: Արծվի է փոխակերպվում Ինդրան[141]: Հին հնդկական և հին իսլանդական դիցերում արծիվը

---

[134] **Wiseman D. L.**. Gotter und Menschen.Im Rollsiegel Westasiens. Prague.1958, S.11,12 (ebook):. **Խաչատրյան Ժ.**, 2003, նշվ. աշխ., էջ 169:

[135] **Խաչատրյան Ժ.**, 2003, նշվ. աշխ., աղ. I,14:

[136] Նույն տեղում, աղ. I,13:

* Հնդեվրոպական որոշ ավանդույթներում, հատկապես գերմանական, ագռավն իր ծիսական նշանակությամբ մոտենում է արծվին (**Гамкрелидзе Т. В., Иванов В. В.,** նշվ. աշխ., էջ 540); Ագռավը եղել է Միհրի-Միթրայի հավատարիմ ուղեկիցներից մեկը, որը միթրայական պատկերագրության մեջ սերտորեն կապված է արևի խորհրդանիշի հետ (**Քոչարյան Գ.**, Անտիկ դարաշրջանի զոհասեղան Դվինից//Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 2, էջ 282); Ագռավը նաև Միհրի մշտական ուղեկիցն է (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, նշվ. աշխ., էջ 269); Նոր տարվա հաջորդ օրը «բախտ-փորձուկ» էր. երիտասարդները և աղջիկները նախընթաց օրը պատրաստած «ղառղոի կլիկներ» կոչվող կլոր, փոքրիկ հացերը դնում են կտուրին կամ դեզի վրա և դիտում, թե ագռավները որ կողմ են տանում հացը՝ հավատալով, որ կողմից էլ գալու է հարսը կամ փեսան (Ազգագրական հանդես, Գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 250); Ագռավը չեխերի և սլավոնների մոտ երեխաների հոգիներ է աշխարհ բերում, նրանց կերակրում է շիլայով, հոգ է տանում նրանց մասին մինչև ծնվելը, նաև աշխարհ գալուց հետո նրանց իր մոտ է վերցնում, երբ նրանք մեռնում են (**Потебня А. А.** Труды. Символ и миф в народной культуре. М., Изд. Лабиринт, 2000, стр. 165 (ebook).); Ամռան սկզբին գերմանացիները տնից տուն էին գնում սատկած ագռավով՝ ձմռանը հաղթողի խորհրդանշանով (Նույն տեղում, էջ 170):

[137] **Иванов В. В**. 1974. նշվ. աշխ., էջ 94-95:

[138] **Ардзинба В.Г.** Ритуалы и мифы древней Анатолии. М., Изд. «Наука», 1982, стр. 109; **Гамкрелидзе Т. В., Иванов В. В**., նշվ. աշխ., էջ 538:

[139] **Ардзинба В. Г.**, նշվ.աշխ., էջ 88-90; **Իսրայելյան Հ.**, 1973, նշվ.աշխ., էջ 101-114: **Մարտիրոսյան Հ.**, նշվ.աշխ., էջ 41-42; **Иванов В. В., Топоров В. Н**., նշվ. աշխ., էջ 258-260: **Гамкрелидзе Т.В., Иванов В.В.**, նշվ. աշխ., էջ 538:

[140] **Առաքելյան Բ.,** Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1949, էջ 93:

[141] **Топоров В. Н.** Индра, նշվ. աշխ., էջ 534:

միշտ գտնվում է Կենաց ծառի ամենավերևում, հին գերմանականում ներկայացվում է սրբազան կենդանիների՝ գայլի և արջի հետ և հանդերձյալ աշխարհի երեք սրբազան կենդանիներից մեկն է[142]: Արծիվը Զևսի և Յուպիտերի խորհրդանիշ թռչունն էր[143]: Զևսը պատկերվում էր գահավորակին բազմած՝ աջ ձեռքին նստած արծվով: «Թռչուններից գերիզորը»[144] աստվածացված թռչուններից ամենատարածվածն աստվածների խորհրդանշանն է, Զևսի կայծակներ տեղափոխողն ու սուրհանդակն է, աշխարհներ կապողը[145]:

Արծիվը համարվում էր դժոխքի աստված: Արծիվն է ծվատում տիտան Պրոմեթևսի լյարդը[146]: Զևսի կանխանշանով երկնքում հայտնված, միմյանց կուրծք ծվատած և անհետացած արնաշաղախ երկու արծիվները են խորհրդանշում Պենելոպեի փեսացուների վախճանը[147]: Թագավորն աստված էր,[148] և արծիվը դառնում է նաև արքաների խորհրդանիշ թռչուն: Արծիվը Երվանդունիների զինանշան է, որոնցից ժառանգել են Արտաշեսյանները: Տիգրան II-ի և Արտավազդ II-ի դրամների պատկերագրության մեջ թագերի վրա արև խորհրդանշող վարդյակի երկու կողմերում իրար թիկունքով կանգնած, գլուխները դեպի արևը շրջած արծիվներ են[149]: Արծիվը խորհրդանշում է երկինքը, արևը և անդրաշխարհը: Ճախրող արծվի և արևի սերտ կապը դրոշմված է Գեղամա լեռների ժայռապատկերներում՝ թռչունը արևի ճառագայթավոր սկավառակի մոտ[150]: Թռչնի դերը հեքիաթներում և առասպելներում մեկն է. նա հերոսին տեղափոխում է մեկ այլ աշխարհ[151], և այդ դերն ունի նաև արծիվը, որը՝ որպես հարության և ուժի խորհրդանիշ,պահպանվել է քրիստոնեական կրոնում[152]: Հայ բանահյուսության մեջ արծիվը կապված է նաև գարնանամուտի հետ՝ խորհրդանշելով զարթոնք և վերածնունդ: Աղթարքներից մեկում մարտի 15-ի առթիվ աս-

---

[142] **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 538:

[143] **Фоминицын А. С.** Божества древних славян. СПб, 1884, с. 129; **Голан А.**, նշվ. աշխ., էջ 172; **Иванов В. В., Топоров В.Н.** Орел. նշվ. աշխ., էջ 258-260:

[144] **Հոմերոս,** նշվ. աշխ., Երգ ութերորդ, տող 249:

[145] **Иванов В. В., Топоров В. Н.** Орел. նշվ. աշխ., էջ 258-260; **Брашинский И. В.** Экономические связи Синопы в IV-IIвв. до.н.э., В кн: «Античный город». М., Изд. АН СССР, 1963, стр. 88 (ebook).

[146] **Կուն Ն.**, նշվ. աշխ., էջ 127:

[147] Նույն տեղում, էջ 506:

[148] Թագավորն աստված էր դառնում ոչ միայն մահից հետո, այլ նաև աստծու դեր ուներ կյանքում, հատկապես ծիսակարգում (**Kammenhuber** Die hethitischen Vorstellungen von Seele und Leibesinnerem, Kopf und Person, 1-2. 1964-1965,199) (ebook):

[149] **Тирацян Г.** Культура древней Армении. Ер., Изд. АН Армянской ССР, 1988, табл. XXV-XXVIII; **Хачатрян Ж.** Отражение ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, 2000, էջ 42-43:

[150] **Մարտիրոսյան Հ. Հ., Իսրայելյան Հ. Ռ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, տախտ.61, նկ. 3:

[151] **Пропп В. Я.**, նշվ.աշխ., էջ 140:

[152] **Առաքելյան Բ.**, 1949, նշվ. աշխ., էջ 93:

վում է. «Այսօր քարքազն (արծիվը) ի Հռոմոց երկիրն գայ»[153]: Մահվան և հարության գաղափարի հետ է կապված Անիում բացված դամբարանում բազմաթիվ թռչունների պատկերներով կարմիր մետաքսաթելով ասեղնագործ կտորը՝ փռված աղջնակի գլխի տակ [154]:

Այսպիսով, ձին և թռչունը կապված են արևի, ջրի, երկնքի, ստորերկրայքի հետ: Երկուսի միավորումից ստեղծվել է դիցաբանական մեկ այլ կերպար՝ թևավոր ձին, որի դիցաբանական կերպարի ձևավորման ակունքները բացահայտվում են լեզվաբանության մեջ: Ըստ Վ. Պրոպի՝ տնտեսության նոր ձևը նոր կերպարներ է մտցնում, որոնք ստեղծում են նոր կրոն: Լեզվում նույնպես փոփոխություն է տեղի ունենում, հին բառը անցնում է նոր կերպարին, և ձիուն անվանում են թռչուն, իսկ բանահյուսության մեջ ձին ստանում է թռչնի կերպ, և ստեղծվում է թևավոր ձիու կերպարը[155]: Ն.Մառի կարծիքով՝ նախապատմական շրջանում ձին նշանակում էր թռչուն: Իմաստաբանորեն թռչունը կապված է երկընքի հետ և մարդու կենցաղում իհարկե չէր կարող փոխարինել ձիուն[156]: Ձիու մարմնով և թռչնի թևերով թևավոր ձիու կերպարը մտնում է դիցաբանության մեջ:

Հայաստանում հայտնի են մ.թ.ա. XIII-VIդդ. լայն կիրառություն ունեցած ձիերի պատկերներով բազմաթիվ բրոնզե գոտիներ[157], որոնց մեջ կան նաև հրեղեն ձիու զավակին թռչնով օրինակներ[158]: Թևավոր ձիերի մասին պատկերացումներ կան իրանալեզու ժողովուրդների դիցերում: Երկնային ձիերի մասին լեգենդներ կան Բակտրիայում և Ֆերգանայում: Տաջիկները հավատում են, որ գիշերը ձիերը բաց են թողնում թևերը[159]: Նարթական պատումներում էպիկական հերոսին օգնող և ուղեկցող ձիերը ճախրում են ինչպես թռչուններ[160]: «Ռիգվեդայում»՝ ձիուն նվիրված հիմնում, ձիուն խնդրում են թռչել և հանգուցյալին բարեհաջող հասցնել նախնիների մոտ[161], իսկ ձիերով լծված արևի կառքի շար-

---

[153] Նույն տեղում, էջ 92:
[154] **Орбели И. А.** Избранные труды. Ер., Изд.АН Арм ССР, 1963, стр. 44-46.
[155] **Пропп В. Я.**, նշվ. աշխ., էջ 142:
[156] **Марр Н. Я.** Избранные работы. Т. 3, М.-Л., «ГСЭ изд.», 1934, стр. 125 (ebook).
[157] **Пиотровский Б. Б.** История и культура Урарту, Ер.,Изд. АН Арм. ССР,1944, стр. 275.
[158] **Իսրայելյան Հ. Ռ.**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզիդարյան Հայաստանում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, նկ. 26, 35
[159] **Литвинский Б. А.** Кангюйско-сарматский фарн (к историко-культурным связам племен южной России и Средней Азии). Душанбе, Изд.«Дониш»,1968, с. 148 (ebook).
[160] **Кузьмина Е. Е.** 1976, նշվ. աշխ., էջ 71:
[161] Ригведа, Мандалы IX-X. Издание второе. Издание подготовила **Т. Я. Елизаренкова**, М., Изд. «Наука» 1999, X, 56 (ebook).

ժումը երկնքում բազմիցս համեմատվում է թռչնի թռիչքի հետ[162]: Չի-թռչունները համադրվում են Սուրյայի, Ինդրայի, Ագնիի և Աշվինների հետ[163]:

Հնդիրանական ժողովուրդների հավատալիքներում ձին ոչ միայն ինկորնացիա է, արև-աստծու ատրիբուտ և զոհաբերության կենդանի, այլ նաև մայր աստվածուհու, աստվածների ու աստվածային հերոսների, մասնավորապես, Ագնիի ուղեկից[164]: Ագնիի թևավոր ձիերը ծառայում էին միջնորդ երկնքի և երկրի միջև, զոհաբերությունները հասցնում էին աստվածներին ու հանգուցյալների հոգիները տեղափոխում վերին երկինք՝ նախնիների մոտ՝ հավերժական արոտավայրեր[165]: Թևավոր ձին ակնթարթորեն հերոսին տեղափոխում է մի տեղից մյուսը: «Սասնա ծռեր»-ում Ձենով Հովանին «ձին եսաց, Հովհա՛ն, քու աչքիր խփիր-Խփեց://Մըկել եսաց.-Հովհա՛ն, քու աչքիր բաց...»[166]: Մի զրույցում ս. Սարգիսն անմիջապես հայտնվում է օգնություն կանչող տղային, նրան առնում իր ձիու գավակին ու մի ակնթարթում հասցնում սիրած աղջկան[167]:

Երկվորյակները սլանում են ձիերով և թռչուններով լծված ոսկյա կառքով[168]: Հունական դիցաբանության մեջ թևավոր ձիուն մարմնավորում է Պեգասոսը: Ենթադրվում է, որ Պեգասոսը եղել է տոտեմական աստվածություն, որին պաշտել են ձիու կերպարանքով, որից էլ՝ նրա Հիպպիոս մականունը[169]: Պեգասոս անունը նաև մոտ է հունարեն «pege-աղբյուր, ակունք» իմաստներին և այս պատճառով էլ կարող է կապվել անդրաշխարհի հետ: Թևավոր էին Հելիոսի ձիերը[170]: Իրանական հավատալիքներում ձիերն ունեն մարդկանց համար անտեսանելի թևեր: Թևավոր ձին բնորոշ է հյուսիսկովկասյան ազգություններին և ռուսական ժողովրդական արվեստին[171]: Դիցաբանական թռչնի և ձիու հատկանիշները արտացոլված են հայկական ավանդույթներում, ծեսերում ու հավատալիքներում, փոխանցվել են քրիստոնեությանը՝ դրանցով օժտելով սրբերին: Ձիով անցնելիս ս. Սարգիսը ոտքը սեղմում է արժանավոր անձանց փոխնդի վրա: Այդ խաշիլից մի գդալ դնում են բարձր տեղ և ծածուկ հսկում, թե ինչ

---

[162] Նույն տեղում, IX,71, 9; IX, 97, 33; X, 30, 2 : X, 55, 6:
[163] **Кузьмина Е. Е.** 1976, նշվ. աշխ., էջ 71:
[164] Նույնը:
[165] Նույն տեղում, էջ 72 :
[166] «Սասնա ծռեր», 1936, Թ պատում, էջ 429, §24 ;
[167] **Աբեղյան Մ.**, 1975, նշվ. աշխ., էջ 81-82:
[168] **Топоров В. Н.** Ашвины. МНМ, т.1, М. Изд. «Советская энциклопедия», 1991, стр. 144.
[169] Նույնը:
[170] **Կուն Ն.**, նշվ. աշխ., էջ 90:
[171] **Динцес Л. А.** Русская глиняная игрушка. М.-Ле., Изд. АН СССР, 1936. стр. 475 (ebook); **Шангина И. И.** Изображение коня и птицы в русской народной вышивке 19-начало 20в//. Советская этнография, 1972, № 3, стр. 117 (ebook).

թռչուն կամ կենդանի կգա ու ուր կտանի իր բաժինը[172]: Ջրի և արևի հետ կապված ձիուն ու թռչնին միավորել է այս և այն աշխարհների հետ ունեցած կապը:

Եզրահանգում. Ազատանի կնիքի հորինվածքում ձին պատկերված է ձախ կողմում, սակայն աջ գնացող դիրքով, ոտքերը հպված չեն գետնին, պոչը վեր բարձրացրած և կարճ կապած (հանգուցված), թռչունը աջ կողմում է, կանգնած է թռիչքի պատրաստ դիրքով, գլխավերևում՝ զիգզագաձև նշան: Ինչպես ձին, այնպես էլ թռչունը աստվածության կենդանակերպ մարմնավորում են, դիցաբանական ընկալումներում ծիսական որոշակի իմաստաբանության կրողներ, որոնցով էլ պայմանավորված է պատկերման ձևը: Հնդեվրոպական ծիսակարգերում պահպանվում է աջի և ձախի հակադրությունը: Ծիսակարգում այն արտահայտվում է զոհ մատուցվող աստվածությունների տարբերակիչ հատկանիշներում,[173] և նույնիսկ գլխավոր աստծու հետ հիշատակվող կենդանիները բաժանվում էին աջ և ձախ կանգնողների[174]:

Կնիքի հորինվածքում ոտքերը գետնից բարձր ձին միջանկյալ դիրք ունի երկրի և երկնքի միջև, աջ ոտքն առաջ դրած, աջ գնացող ձին (հմմտ. «աշիվամեդիա» ծեսում աջ կողմում լծված ձին զոհաբերելը) հավանաբար շեշտում է կենդանու՝ արու լինելը, իսկ փոքր մարմինը ենթադրում է, որ զոհաբերության համար ընտրվածը մտրուկ է[175] (հմմտ.՝ հնդկական և սկյութական ծեսերում հասունության հասած մտրուկներ զոհաբերելը): Ձիու պոչի կարճ, վրձնի նման ձևը ենթադրում է, որ այն հանգուցված է, կենդանին վայրի է և, ըստ հնագույն պատկերացումների, պատկանում է աստվածներին[176]: Հավելենք, որ վեր բարձրացրած պոչը «զուգավորմանը պատրաստ» դիրք է[177]: Արծիվը, որպես գլխավոր կերպար, աջ կողմում է՝ գլխից վեր առանձնակի դերը շեշտող զիգզագով, որը հավանաբար կայծակի խորհրդանիշ է:

Հնդիրանական պատկերացումներում մտրուկը ջրից ծնված կայծակի խորհրդանիշ է[178]: Ենթադրվում է, որ ականջներից ծուխ, իսկ ռունգերից կրակ ժայթքող ձիերը կայծակ են[179] (հմմտ.՝ ս. Սարգսի ձին): Հայոց հավատալիքնե-

---

[172] **Մխիթարյանց Աղ.**, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկվա-Ալեքսոլ,1901, էջ 264 (ebook):

[173] **Ардзинба В. Г**., նշվ. աշխ., էջ 133:

[174] **Ардзинба В. Г.,** նշվ. աշխ., տողատակ 207, էջ 220:

[175] Զոհ մատուցում էին առաջնածին, չզուգավորված կենդանուն: Խեթական որոշ ծեսերում ընդգծվում է կենդանու ծիսականորեն մաքուր, այսինքն՝ զուգավորված չլինելը (տե՛ս **Ардзинба В. Г.,** նշվ. աշխ., էջ 66):

[176] **Максимова М. И.**, նշվ. աշխ., էջ 80**; Гамкрелидзе Т. В., Иванов В. В.** 1984, նշվ. աշխ., էջ 488:

[177] **Խաչատրյան Հ.** Հին հայկական օրացույցի մասին//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 1998, էջ 12:

[178] **Жирмунский В. М., Зарифов Х. Т.** Узбекский народный героический эпос. М., Изд. Гослитиздат, 1947, стр. 169.

[179] **Потебня А. А.**, նշվ.աշխ., էջ 242-243:

րում «...կէծակն Աստծու (հրեշտակների) ձեռքի թուրն է (գավազանը)»[180], ամպրոպային աստծու հրեղեն նետը[181]: «Սասնա ծռեր-ի պատումներից մեկում Քուռկիկ Ջալալին Դավթին հուշում է, թե «*քու թուրն որ կա, կայծակից ա*»[182]: Կայծակը համադրվում է ճախարակի շյուղերի հետ[183]: Բերված համադրումները ենթադրում են, որ արծվի գլխից վեր արված զիգզագը կարող է խորհրդանշել կայծակ՝ շեշտելով ամպրոպի աստծու սուրհանդակի նրա առաջնային դերը, նաև՝ ձիուն երկինք հասցնելու հանգամանքը:

Փոքրասիական բազմանիստների ձևի ընդօրինակություն ունեցող Ազատանի կնիքի հորինվածքում արտացոլված են ծիսական իմաստով ու դերով զուգադիր թռչնի ու ձիու՝ արևի և անդրաշխարհի պաշտամունքի հետ կապված հավատալիքները: Հնդեվրոպական նախնական ընկալումներից սերված հայոց հավատալիքներն ու ծեսերը հիմք են պնդելու, որ հայերի համար ևս ձին կյանք պարգևող է, մուրազատուր, թռչնային արագությամբ հերոսին նպատակին հասցնող, իսկ թաղման ծեսում՝ հանգուցյալին նախնիների մոտ տեղափոխող: Եվ կնիքի հորինվածքը ուղղակի վերջիններիս պատկերային դրսևորումն է:

Ձիու և թռչնի հորինվածքով կնիքը դամբարանում դրվել է հանգուցյալին ուղեկցելու և նախնիների մոտ արագ հասցնելու նպատակով և հավանաբար փոխարինել է ձիու զոհաբերությանը, ինչպես ձիակերպ տապանները: Կարևորվել է նաև գույնը: Ընտրվել է լաջվարդին մոտ կապույտը՝ հավանաբար ոչ միայն քարին վերագրվող բուժիչ զորությունը[184] ապակուն փոխանցելու համար, այլ նաև՝ երկնքի կապույտին հասցնելու:

---

[180] **Լիսիցյան Ստ.**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.12, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 66:

[181] **Մատիկյան Հ.**,Կրօնի ծագումը եւ դիցաբանութիւն, ըստ համեմատական կրօնագիտութեան, Վիեննա, 1920, էջ 271 (ebook):

[182] Սասնա ծռեր, հ. Բ, մ. Բ, ԺԳ պատում, էջ 275:

[183] **Кушнарева К. Х.** Древнейшие памятники Двина. Ер., Изд. АН Арм. ССР, 1973, стр. 90.

[184] **Патканов К. П.** Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, Изд. Восточного отделения Императорского археологического общества, Типография академии наук, СПб., 1873, с. 43-44 (ebook).

Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

Տախտակ I



ИКОНОГРАФИЯ И СЕМАНТИКА МНОГОГРАННОЙ СТЕКЛЯННОЙ ГЕММЫ ИЗ АЗАТАНА

Еганян Л. Г.

Ключевые слова: *античная эпоха, почитание коня и птицы, солнце, вода, небо, мифология, верования, ритуал, жертвоприношение*

Найденная в погребение №2 в раскопках Азатана 2012г. стеклянная гемма - многогранник из синего стекла с стилизованным изображением коня и стоящей перед ним птицы. Имеет форму параллепипеда, переходящего в верхней части в усеченную пирамиду. По продольной оси проделано круглое сквозное отверстие для надевания на нитку. Гемма датируется IIв. до н.э.- I в. н.э. и использовалась в качестве амулета.

Конь - олицетворение божества. Сложившееся в глубокой древности обожествление коня сохранилось в мифах и верованиях индоевропейских народов. Конь перевозит солнечного бога, а иногда сам ассоциируется с солнцем, выступает в качестве образа солнца, само солнце называется конем. По своему происхождению, конь является существом преисподней. связан со смертью, с хтоническим божеством, с владыкой преисподней. Конь не только переносил умершего в загробный мир, он мыслился представителем загробного мира.

В мифах разных народов зафиксирован образ птицы, сотворяющий мир. Орел был самым обожествленным существом являлся символом и вестником неба и богов. Культ орла еще более распространяется и приобретает дополнительные свойства и функции солнечного божества. Конь и птица олицетворяют характерные для индоевропейской концепции мира противопоставления жизни и смерти. Это и основоной смысл изображения коня и птицы на гемме-амулете из Азатана.

ICONOGRAPHY AND SEMANTICS OF VERSATIL GLASS GEMMA FROM AZATAN

Yeganyan L. G.

Key words: *ancient era, veneration of horse and bird, sun, water, sky, mythology, beliefs, ritual, sacrifice.*

The upper layer of the Azatan fortification and its surroundings dating back to 12-6 BC refers to the Hellenistic period. During the excavations of the fortification and the upper layer of the settlement some tombs were discovered of antique origin on the surface. Next to the first tomb, from the level of the north side of the ridge, a large seal was found, which probably fell there during the funeral. The tomb, according to the discovered materials, is dated BCI to the 1st century BC. There will be a rectangular facade on the left, depicting a horse in front of the bird. This form of polygamous

polygon seals has a minor origin. BC V-IV centuries. Such seals were produced only in Asia Minor, and later became widely distributed in the Transcaucasia. The horse and eagle depicted on the seal have the role of mediator between the worlds of the living and the dead and the carriers of the deceased souls in general Indo-European mythology. A horse-and-bird composition was put in the tomb to accompany the deceased and to bring the ancestors up to speed.

References

1. **Yeganyan L., Khachatryan H.** Antic zhamanakachrdjani norahayt dambaranneri peghumner Shirakum, 2008-2016 t.t., «Shiraki patmamshakutayn zharangutyune, hayagitutyan ardi himnahartser» 10-rd midjazgayin gitazhoghovi nyuter, Gyumri 2019 t., edj 28-31 **(In Armenian).**
2. **Arakelyan B. N.** Osherki po istorii iskusstva Drevney Armenii, Yerevan, (Izd. AN Arm. SSR).1976 **(In Russian).**
3. **Ardzinba G. V.** Rituali i mifi drevney Anatolii. «Isd.Nauka», Moskva, 1982 **(In Russian).**
4. **Aubov A. P.** Elementi kulta jivotnikh u nrodov Ustarshani v drevnosti. St. Peterburg Isd. «Nauka» **(In Russian).**
5. **Avakyan L. A.** Tsetvertitshniye ikopaemiye mlekopitayutsisya, Yerevna, Izd. AN Arm. SSR, 1959 **(In Russian).**
6. **Babaev I. A.** O trekh mnogogranikh petshatakh naidenukh v Mingetshaure// «Sbornik sta tei», Baku, 1965 **(In Russian).**
7. **Belov A.** Pokloneniye Perunu... V kn : Mifi i magiya indoevropeycev. Vipusk 2. Podredakciey A. Platova. Izd.«Menedjer», 1997 **(In Russian).**
8. **Belenitskiy A. M.** Khutalskaya loshad v legende i istoritseskom predanii. Sovetskaya etnografiya. Izd. AN SSSR. 1948, № 4 **(In Russian).**
9. **Brashinskij I. V.** Economitheskie sviazi Sinopi v IV-IIvv. do n.e. v kn: «Antitshni gorod» (Izd. AN SSSR) Moskva, 1963 **(In Russian).**
10. **Borozova N.** Nekotorie materiali ob amuletakh-ukracheniakh naselenia Srednei Azii v sb.: «Domusilmanskie veriwania I obriadi v Srednei Azii. Moskva, (izd. «Nauka») 1978 **(In Russian).**
11. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.** Indoevropeiski yazik i indoevropeici II, Tbilissi, (Izd.Tbilisski universitet), 1984 **(In Russian).**
12. **Gerni Oliver**. Hetti. Moskva, Izd. «Nauka», 1987 **(In Russian).**
13. **Golan A.** Mif i simvol. Moskva, Izd.Russlit, 1993 **(In Russian).**
14. **Dinces L.A.** Russkaya glinyanaya igrushka. M.-L.,Izd. AN SSSR,1936**(In Russian).**
15. **Esayan S. A.** Dzin Urartui razmakan gorcum. Yerevan, Izd. HSSH GA// Tekhekagir hasrakakan gitutunneri,1962. 2 **(In Armenian).**
16. **Esayan S. A.** Orujiye i voyennoe delo drevney Armenii. Yerevan,Izd. AN Arm.SSR, 1966. **(In Russian).**

17. **Esayan S. A., Kalantaryan A. A.Oshakan I.** Osnovniye rezultati raskopok 1971-1983 gg. Yerevan, Izd. AN Arm SSR, 1988 **(In Russian).**
18. **Jirmunskiy V. M., Zarifov Kh.T.** Uzbekskiy narodniy geroitsheskiy epos. Moskva, Izd. Gos litizdat, 1947 **(In Russian).**
19. **Petrosyan L. A.** Raskopki pamyatnikov Keti i Voskeaska. Yerevan, Izd. AN Arm. SSR, 1989 **(In Russian).**
20. **Petrosyan E.** Bogi i rituali dreney Armenii. Yerevan, (Izd. «Zangak-97») 2004 **(In Russian).**
21. **Patkanow K. P.** Dragocenniekamni, ikh nazvaniya i soystva po ponyatiyam armyan XVII veka. Izd.-vo Vostotsnogootdeleniya Imperatorskogo obshestva.Tipografiya AN SPb, 1873 **(In Russian).**
22. **Piotrovskiy B. B.** Razvitiye skotovodstva v drevneyshem Zakavkazye. Sovetskaq arkheologiya. XXIII, 1955 **(In Russian).**
23. **Piotrovskiy B. B.** Istoriya i kultura Urartu. Yerevan, Izd. AN Arm SSR, 1944 **(In Russian).**
24. **Potebnya A. A.** Sobranie trudov. Simvol i mif v narodnoj kulture. M., (Izd.labirint), 2000 **(In Russian).**
25. **Propp V.** Istoricheskiye korni volshebnoy skazki. L., (Izd. labirint), 1986 **(In Russian).**
26. **Ivanov V. V.** Opit istolkovaniya drevneindeiskikh ritualnikh i mifologicheskikh ritualnikh terminov, obrazovanikh ot «asva-kon». v sb. «Predmeti istorii yazikov I kulturi narodov Indii». M., Izd. Nauka, 1974 **(In Russian).**
27. **Ivanov V. V., Toporov V.N.** Orel. Mify narodov mira, T.2 Moskva, (Izd. Sovetskaq enciklo-pediya), 1992 **(In Russian).**
28. **Ivanov V. V.** Izbrannie trudi po semantike i istorii kulturi. T. V, Mifologiya i folklor. M., (Izd.Znak), 2009 **(In Russian).**
29. **Klein L. S.** Drevniie migracii i proiskhojdenie indoevropiyskikh narodov. St. Peterburg, (Izd.St.Peterburg) 2007 **(In Russian).**
30. **Klinger K. H.** Jivotnie v antichnom i sovremennom sueverii. Kiev, (Izd. Universiteta St.Vladimira), 1911 **(In Russian).**
31. **Kuzmina E. E.** Navershie so vsadnikami iz Dagestana//Sovetskaya arkheologiya, №2, M., Izd. AN SSSR,1973 **(In Russian).**
32. **Kuzmina E. E.** O semantike izobrajeniy Chertomlickoy vaze.//Sovetskaya arkheologiya, M., 1976, №3 **(In Russian).**
33. **Kuzmina E. E.** Rasprostraneniye konevodstva i kulta konya u iranskikh plemen Sredney Azii i drugikh narodov Starogo Sweta.V kn: «Srednaya Aziya v drevnosti i srednevekoviye». M., (Izd. Nauka), 1977 **(In Russian).**
34. **Kushnareva K. Kh.,Tshubinishvili T. V.** Drebneyshie kulturi yujnogo Kavkaza. L., Izd. «Nauka», 1970 **(In Russian).**
35. **Litvinskiy B. A.** Kangyuysko-sarmatskiy farn. Dushanbe (k istoriko-kulturnim svyazam plemen yujnoy Rossii i Sredney Azii). Izd. «Donish», 1968 (**In Russian**).

36. **Lordkipanidze M. N.** Gemmi gosudarstvennogo muzeya Gruzii.III, Tbilisi, 1961 **(In Russian).**
37. **Losev A. F.** Poseydon. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T 2,1992 **(In Russian).**
38. **Maksimova M. I.** Steklyanie mnogogrannie petshati najdennye na territorii Gruzii. Tbilisi, Izd. Akademia Nauk Gruzii, 1948 **(In Russian).**
39. **Marr N.Ya.** Izbrannie raboti. T. 3, M.-L., Gosudarstvennoe socialno-ekonomit-skeskoe izd. 1934 **(In Russian).**
40. **Muiller V.** Russkaya maslenica i zapadnoevropeyski karanaval. M., Izd. Univer-sitetskaya tipografia, 1884 **(In Russian).**
41. **Orbeli I.A.** Izbranniye trudi. Yerevan, Izd. Akademii Nauk Arm. SSR.1963. **(In Russian).**
42. Rigveda Mandali I-IV, Izdaniye podgotovila T.Elizarenkova. M., Izd «Nauka», 1999 **(In Russian).**
43. **Rubakov B. A.** Prikladnoe iskusstvo I skulptura. V kn: Istoriya Drevney Rusi. T.2, M.-L., Izd. AN SSSR, 1951 **(In Russian).**
44. **Sardaryan S.** Paleolit Armenii. Yerevan, Izd.AN Arm.SSR, 1954 **(In Russian).**
45. **Shangina I. I.** Izobrajeniya koya i ptici v russkoi narodnoi vishivke 19-nathsalo 20v. //«Sowetskaya Etnografia». №3, M., 1972 **(In Russian).**
46. **Skrjinskaya M. V.** Sostyazaniya na drevnegrecheskikh prazdnikakh v Severnom Pritcherno morya.// Possiskya arheologiya, 2004, 2 **(In Russian).**
47. **Temkin E.N., Erman B.G.** Mifi drevney Indii. M., Izd. «Nauka», 1982 **(In Russian).**
48. **Tiratsyan G.** Kultura drevney Armenii. Yerevan, Izd. AN Arm. SSR, 1988 **(In Russian).**
49. **Toporov V. N.** Ashvini. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T.1, 1991 **(In Russian).**
50. **Toporov V. N.** Pup zemli. Mify narodov mira, M., Izd. Sovetskaya enciklopediya, T.2, 1992 **(In Russian).**
51. **Toporov V. N.** Konnie sostyazaniya na pokhoronakh. Issledovaniya v oblasti balto-slavyanskoi dukhovnoi kulturi. M., Izd. «Nauka», 1990 **(In Russian).**
52. **Tsalkin V. I.** Drevneyshiye domachnie jivotniye Vostochsnoy Yevropi. M., Izd. «Nauka», 1996 **(In Russian).**
53. **Fray R.** Nasledie Irana. M., Izd.Nauka AN, 1982 **(In Russian).**
54. **Fominicin A. S.** Bojestva drevnikh slavyan. M., izd. SPb, 1884 **(In Russian).**
55. **Yankovskaya N. B.** Nekotoriye voprosi ekonomiki assiriyskoy derjavi/Vestnik drevny istorii. 1956, №1 **(In Russian).**
56. **Abegyan M.** Erker. h. E. Yerevan, HSSH GA hrat., 1975 (**In Armenian).**
57. **Agatangelos,** Hayoc patmutun. Yerevan, (YePH hrat.), 1983 **(In Armenian)**.
58. Azgagrakan handes. X, Tiflis. 1903 **(In Armenian).**
59. **Araqelyan B.** Haykakan patkeraqandakner IV-VIIdarerum. Yerevan, HSSR GA hrat., 1949 **(In Armenian).**

60. Grigor Magistrosi Tkhter.i luys intsaec K.Kostanyan, Aleqsandrapol, 1910 **(In Armenian).**
61. Dicabanakan bararan, Yerevan, «Luys» hrat., 1985 **(In Armenian).**
62. **Eganyan L.** Shun@ ev dzin antik Beniamini taghman tsesum. HH GAA CHH Kentroni «Gitakan ashkhatuthunner» h. I, Gyumry, 1998 **(In Armenian).**
63. **Hayrapetyan T.** Tsisakan mrcutyan mshakyth@ haykakan hrashapatum heqiatne-rum //Patma-banasirakan handes, 1, 2012 **(In Armenian).**
64. **Israyelyan H.** Pashtamunq@ yev havataliq@ ush bronzidaryan Hayastanum, Yepevaн, HSSH GA hrat., 1973 **(In Armenian).**
65. **Israyelyan H.** Erkvoryakneri pashtamunqi hetqer hin Hayastanum//Patma-banasirakan handes, 3, 1980 **(In Armenian)**.
66. **Lalayan E.** Hugharkavorutyan yev gerezmanneri zargacum@ Hayastanum. Yerevan, «Tekhegagir» HGKH Gitutyan ev arvesti instituti, 1928 **(In Armenian).**
67. **Lisicyan St.** Lernain Kharabakhi hayer@. Hay azgagrutun yev banahyusuthyun. h. 12, Yerevan, 1981 **(In Armenian).**
68. **Khatsatryan J**. Ditoghuthyunner Hayastani hellenistakan shrjani gliptikai masin.// HSSH GA Lraber hasarakakan gitutunneri, Yerevan, 1974, №7 **(In Armenian).**
69. **Khatsatryan J.** Hayastanum haytnabervats bazmanist kniqner.//HSSH GA «Patma-banasirakan handes», №1, Yerevan, 1965 **(In Armenian).**
70. **Khatsatryan J.** Artsvi tarber horinvatsqnerov knqadroshmner, gemaner yev qandakner.//«Patma-banasirakan handes», №2, Yerevan, 2003 **(In Armenian).**
71. **Khatsatryan A.** Hin haykakan oratsytsi masin// HH GAA SHHHK «Gitakan ashkhatutynner», I, Gymri, «Gitutyn», 1998 **(In Armenian).**
72. **Khnkikyan O.** Norahayt hushardzan Gorisum.//HSSH GA «Patma-banasirakan handes», Yerevan,1981, №4 **(In Armenian).**
73. **Khorenaci M.** Hayots patmutun. Yerevan, «Hayastan» hrat., 1990 **(In Armenian).**
74. **Kun N.** Hin Hunastani legendner yev araspelner. Yerevan, «Haypethrat», 1956, **(In Armenian).**
75. Hay joghovrdi patmuthun, h.I, Yerevan, GA hrat., 1971 **(In Armenian).**
76. Hay jogovrdakan heqiatner, hh.IV, XIII, Yerevan, GA hrat.), 1963, 1984 **(In Armenian).**
77. **Herodotos.** Yerevan, (GA hrat.), 1986 **(In Armenian).**
78. **Homeros.** Iliakan. Yerevan, (Yerevani hamalsarani hrat.), 1987 **(In Armenian).**
79. **Mnacakanyan A.** Haykakan zardarvest, Yerevan, (GA hrat.), 1955 **(In Armenian).**
80. **Martorosyan H.** Gitutun stedhcvum e nakhnadarum. Yerevan, Sovetakan grogh hrat., 1978 **(In Armenian).**
81. **Matikyan H.** Kroni tsagum@ yev dicabanuthun@ @st hamematakan kronagitutyan, Vienna, 1920 **(In Armenian).**
82. **Mkrtshyants Ag.** Pshranqner Shiraki ambarnerits.Eminyan azgagrakan joghovatcu, h. A, Moskwa-Alekpol, 1901 **(In Armenian).**
83. **Qosharyan G. G.** Antik darashrdjani zohasegan Dvinits.// HSSH GA «Patma-banasirakan handes», №2, Yerevan, 1977 **(In Armenian).**

84. **Khsenofon.** Anabasis. Yerevan, GAA hrat., 1970 **(In Armenian).**
85. **Srvandztyan G.** Manana, K.Polis, 1876 **(In Armenian).**
86. **Strabo.** Yerevan, YePH hrat., 1940 **(In Armenian).**
87. «Sasuntsi Davit» haykakan joghovrdakan epos. Yerevan, Haypethrat hrat., 1961 **(In Armenian).**
88. Sasna Tsrer. H.A, Yerevan, Pet. hrat.,1936, patum ID **(In Armenian).**
89. **Ter-Margaryan St.** «Vardbag» taratski antik dambaranadashteri pegumner. HH GAA HAI, 1989-90tt. Dashtayin hnagitakan askhatangneri ardyunqnerin nvirvats gitakan nstashrdjan, Yerevan, 1991 **(In Armenian).**

Ընդունվել է՝ 05.03.2020
Գրախոսվել է՝ 20. 04. 2020
Հանձնվել է տպ. 27 . 05. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ՝ պատմ.գիտ. թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի առաջատար գիտաշխատող